

ԲԵՅՐՈՒԹԻ «ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ»-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԸ

Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի Մայր Աթոռ ուղարկած քսանամյակի գործունեությանը նվիրված տեղեկագրից քաղվածաբար «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հետևյալ շահեկան տեղեկությունները:

1960 թվականի հունվարի 13-ին Բեյրութում, հանգուցյալ Տ. Խադ արքեպ. Աջապահյանի նախագահությամբ գումարված ժողովում, «պաշտոնապես հիմնված կհայտարարվի Կրոնասեր Տիկնանց Համախմբումը», որի «հիմնադիր վարչության անդամուհիները կըլլան».

Տիկ. Արշալույս Այվազյան՝ ատենապետուհի.
Տիկ. Անգինե Տանձիկյան՝ փոխատենապետուհի.
Տիկ. Զվարթ Բոյաջյան՝ ատենադպրուհի.
Տիկ. Հայկուհի Թորոսյան՝ գանձապահուհի.
Տիկ. Արուսյակ Ալթունյան՝ խորհրդական
Տիկ. Մելինե Դեմիրճյան՝ խորհրդական.
Տիկ. Զվարթ Ներսեսյան՝ խորհրդական:

Վերոհիշյալ ժողովում մշակվում և վերջնական ձև է ստանում նաև Համախմբումի ծրագիր-կանոնագիրը՝ հիմք ունենալով Տ. Դերենիկ եպս. Փոլատյանի պատրաստած նախագիծը:

Համախմբումի երկու հիմնական նպատակներն են լինում.

1. Վառ պահել քրիստոնեական հավատքը ու ճշմարտությունները, հավատարիմ մնալ Հայաստանյայց Եկեղեցու դավանությանն, ավանդություններին, սրբություններին և բարեզարդելով պայծառացնել հայ եկեղեցիները:

2. Աշխատել հոգևոր և կրոնական կյանքի տարածմանն ու ամրապնդմանը հայ ընտանեկան հարկերից ներս հաճախակի կազմակերպվող դասախոսություններով և այլ դաստիարակիչ միջոցներով:

Առաջին իսկ շրջանում Համախմբումի անդամների թիվը հասնում է 100-ի և ապա՝ 200-ի:

1978 թվականից սկսած Միության ատենապետուհի է ընտրվում Տիկ. Անգինե Տանձիկյանը, որը նվիրումով և ձեռնհասորեն վարում է Համախմբումի աշխատանքները:

Այժմ Համախմբումի վարչության անդամներն են.

Տիկ. Անգինե Տանձիկյան՝ ատենապետուհի.
Տիկ. Ռոզին Պապայան՝ ատենադպրուհի.
Տիկ. Հայկուհի Թորոսյան՝ գանձապահուհի.
Տիկ. Արաքսի Վարժապետյան.
Տիկ. Շ. Շաքլյան.
Տիկ. Մ. Հարությունյան.
Տիկ. Ա. Թոմպազյան.
Տիկ. Մ. Պալասանյան.
Տիկ. Մ. Շեքիրճյան:

Տ. Գնել եպս. Մերեճյանը և հանգուցյալ Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը իրենց խորհուրդներով և աջակցությամբ մշտապես օգտակար են եղել Համախմբումի եկեղեցանվեր աշխատանքներին:

Համախմբումի եկամուտի գլխավոր աղբյուրներն են եղել անդամավճարները, նվիրատվություններն ու հասութաբեր ձեռնարկները:

Համախմբումի հիմնական ծախսերը կազմել են «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և անոր միջոցով նաև Մայր Հայրենիքի տարբեր

եկեղեցիներու պայծառացման համար եղած հատկացումները»:

1974 թվականին Նոր Վեհարանի շրջափակում Համախմբումի նախաձեռնությամբ կառուցվել է Վեհամոր՝ Սիրանույշ Պալճյանի հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանը: Համախմբումը ձեռնարկել է նաև Սևանի թերակղզում Ս. Առաքելոց պատմական եկեղեցու վերանորոգությանը, «որուն նախատեսված ամբողջ ծախսին կեսը արդեն փոխանցված է Ս. Էջմիածին: Լիբանանի աղետալի, երկարատև կռիվներուն հետևանքով դժբախտաբար կարելի չեղավ ավելի շուտ գոյացնել անհրաժեշտ գումարը: Կհուսանք, սակայն, թե առաջիկային կարելի պիտի ըլլա գլուխ հանել այս գործը», գրված է Մայր Աթոռ ուղարկված Համախմբումի «ամփոփ տեղեկագիր»-ում:

Այդ տեղեկագրից իմացվում է նաև Մայր Աթոռ ուղարկված ցուցակը նվիրատվությունների՝

Արծվեգորգ՝ 8 հատ, պատարագի սպիտակ շապիկներ՝ 12 հատ, պատարագի ձեռագործ աշխատված թավիշ հողաթափեր՝ 28 զույգ, գրակալի թավիշ ծածկոցներ, ամպհովանի՝ բարերարությամբ տիկին Լուսիա Ուզունյանի, 11.500 լիբանանյան ոսկի արժեքով, շղարշ՝ 40 հատ, դպիրների գունավոր շապիկներ՝ 50 հատ, պատարագի շապիկներ՝ 40 հատ, գուլպա՝ 200 զույգ, շուրջառներ՝ 45 հատ, պատարագի զգեստի լրիվ կազմածներ, ստենլես ստիլ կաթսաներ՝ 20 հատ, խորանի սատեն վարագույր, սև թավիշ վարագույր, զանազան եկեղեցիների եկեղեցական զգեստներ և այլ նման նվերներ:

Համախմբումը, հավատարիմ իր ծրագիրկանոնագրին, կազմակերպել է զանազան ձեռնարկներ, դասախոսություններ, ճաշկերույթներ, հանդիպումներ տարբեր առիթներով:

Այս տարի, նոյեմբերի 20-ին, Համախմբումի նախաձեռնությամբ Ալեքս Մանուկյան Կենտրոնի Ասպետների դահլիճում տեղի է ունեցել Ս. Էջմիածնի ֆիլմի ցուցադրությունը, որը հատկապես լուսանկարել էր այս տարի Զատկի տոնին տիկին Ա. Տանձիկյանը Մայր Աթոռում «հաղորդվելու Մայր Աթոռի սրբութեանն և գոտեպընդվելու Ամենայն Հայոց կաթողիկոսին Կրոնասեր Տիկնանց Համախմբումին ուղղած սրտառուչ պատգամեն»:

Հանդիսության ընթացքում Համախմբումի ատենապետուհի տիկ. Ա. Տանձիկյանը «հետադարձ ակնարկով մը կկատարե պատմականը Համախմբումի հիմնարկության՝ 1959 թվականին և ատկից ետք իրենց կատարած աշխատանքին, ի սպաս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո պայծառության»:

Այնուհետև վարչության ատենադպրուհի տիկ. Ռոզին Պապայանը իր ելույթի մեջ «առավելաբար անդրադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նշանակության: Սուրբ Էջմիածինը հայության համար պարզ կրոնական հաստատություն մը չէ եղած: Ան եղած է ամենեն առաջ Լուսի Խորան մը, այդ առաջադրանքով ան շինվեցավ, երբ Լուսավորիչը կպատգամեր. «Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ»: Դարեր շարունակ Էջմիածինը հավատարիմ մնաց այդ պատգամին և Լույս բաշխեց Հայաստան աշխարհին: Նախախնամական պետք է համարել, Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա. Վեհափառի ընտրությունը, Լուսավորչի գահին վրա: Ուղիղ քառորդ դար անցավ այն երանավետ ու օրհնաբեր թվականեն, 1955 սեպտ. 30, երբ Սուրբ Էջմիածնի գահին վրա բարձրացավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառը:

Ն. Սուրբ Օծության հայրապետական օրհնյալ մականին տակ ծնան ու ծաղկեցան մայրավանքը, տպարանը, նոր թանգարանը, ընծայարանը և Վեհարանը:

Այժմ քսանհինգամյա իր փառավոր ու արժանավոր վաստակեն վերջ, մեզի կմնա սրտագինս մաղթել, աղոթել առ բարձրյալն Աստված, արևշատությամբ բազմապատկել օրերը մեր բազմաշնորհ Հայրապետին. թող անսասան մնան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և նվիրապետական մեր մյուս Աթոռները:

Միշտ մեր անդամուհիներուն քաջալերությամբ պիտի շարունակենք մեր համեստ օժանդակությունը բերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության»:

Իր ելույթի վերջում տիկ. Ռ. Պապայանը հայտնում է, որ Ամենայն Հայոց Հայրապետը տեր և տիկին Գ. Ա. Տանձիկյանների միջոցով, որոնք վերջերս ուխտավորաբար Մայր Աթոռ էին այցելած, Իր օրհնությունն է ուղարկել Համախմբումի բոլոր անդամներին՝ մաղթելով նաև «խաղաղություն՝ համայն Լիբանան աշխարհին»:

Ամենայն Հայոց Հայրապետը Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի գործունեության քսանամյակի առթիվ բարեհաճել է «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրել Համախմբումի յոթ վարչականներին՝ իրենց երկարամյա եկեղեցանվեր գործունեության համար, «քաջալերելով զիրենք իրենց սրբանվեր գործունեության հաջող առաքելության համար»: